

**ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԲ**

Ե Ի

**ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ապրիլ 1962  
Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

**ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻՆ,**  
**ՊԱՏՐԻԱՐԲԻՆ ՀԱՅՈՑ ԱՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ,**

**Ս. ԵՐՈՒՍԱԳԷՄ**

Սիրելի Սրբազան Եղբայր Մեր ի Քրիստոս,

Փրկչի Իջման Սուրբ Տաճարէն Ձեզի կր բերենք աւետիար Քրիստոսի հրաշափառ Յարութեան որ սմահուամբ զմահ կոխեաց» եւ «մեզ զկեանս պարգեւեաց»:

Մենք կը հաւատանք թէ իրաւ յարեաւ Քրիստոս, եւ մեզի բուրբիս շնորհեց կենարար յոյսը յաւիտենական կեանքին:

Ի սփիւռս աշխարհի ցրուած հոյ բարեպաշտ հոգիներու համար, այդ յոյսը վառ է ու պայծառ մանաւանդ Լուսաւորչի անմար կանթնդով որ բազում դարերէ ի վեր իր լոյսը եւ իր շնորհները կը սփռէ Սուրբ Էջմիածնէն՝ Հայաստանեայց Եկեղեցիին եւ համայն հայ հաւատացեալ ժողովուրդին վրայ:

Փառք Քրիստոսի լոյս յարութեան:

Փառք լուսոյ խորան՝ Քրիստոսաշէն Սուրբ Էջմիածնին:

Սուրբ Յարութեան աւետիսով կը շնորհաւորենք Ձեր Սուրբ Զատիկը ու կը մաղթենք Ձերդ Ամենապատուութեան, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերուն, Տնօրէն ժողովոյ յարգարժան անդամներուն, դպրաց դասերուն, Ձեր վարժարաններուն եւ կրթական մշակներուն, ազգային, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններուն եւ համայն Մեր սիրեցեալ աստուածասէր ժողովուրդին՝ արեւշատ, երջանիկ ու խաղաղ տարիներ եկեղեցաշէն ու ժողովրդանւէր բեղուն գործունէութեամբ:

Կր մնամք նաեւ ջերմապէս աղօթող համայն աշխարհի խաղաղութեան եւ ժողովուրդներու եղբայրութեան ամրապնդման համար:

Շնորհք Սուրբ Յարութեան Փրկչին մերոյ եւ սխաղաղութիւն Քրիստոսի հաստատեցի ի սիրտս ձեր, յոր եւ կոչեցարուք միով մարմնովս (Կողոս. Գ. 15).

Օրհնութեամբ՝

**ՎԱԶԳԷՆ Ա.**

ԾԱՅՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

